

## ԿՍՏԵՂԾՎԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հուլիսի 1-ին Գեղարքունիքի մարզպետարանում մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը առանձնազրույց ունեցավ «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն Դավիթ Հայրապետյանի հետ: Քննարկվեցին «Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ ստեղծելու եվ խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի համապատասխան որոշման հետ կապված, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերում երիտասարդական քաղաքականությամբ զբաղվող մասնագետի հաստիքի առանձնացման եւ ՏԻՄ-երի աշխատանքներում երիտասարդության մասնակցության ապահովման, մասնավորապես, մարզպետներին առընթեր երիտասարդական խորհուրդների ստեղծման հարցերը: Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանն իր խոսքում կարեւորեց մարզի համայնքներում երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանն աջակցելը, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը խթանելն ու երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը նպաստելը: Քննարկումը շարունակվեց խորհրդակցությունների սենյակում՝ մարզպետարանի համապատասխան պաշտոնյաների, ինչպես նաեւ մարզում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, Գավառի քաղաքապետարանի, տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտխորհուրդների ու ուսխորհուրդների ներկայացուցիչների, երիտասարդ ակտիվիստների մասնակցությամբ: Հանդիպում –խորհրդակցությունն իրականացվում է «Պետական երիտասարդական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության մարզերում» ծրագրի շրջանակներում, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության եւ ԵՄԻԿ ՊՈԱԿ-ի հետ համատեղ: Դավիթ Հայրապետյանն անդրադարձավ նաեւ ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի անցկացմանը եւ մասնակցության պայմանների մանրամասներին: Նա իր խոսքում նշեց, որ եւս երկու նմանատիպ քննարկումների արդյունքում պետք է ստեղծվի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ ու հաստատվի խորհրդի կանոնադրությունը: Երիտասարդների կողմից եղան հստակ առաջարկներ՝ կապված խորհրդի կազմում ոչ միայն մարզի քաղաքային, այլ նաեւ խոշոր գյուղական համայնքների ներկայացուցիչների ընդգրկմանն ու հոգետր դասի ներկայացուցիչ ունենալուն:

